

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի
2013թ-ի մարտի 20-ի նիստի

Օրակարգ

1. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 2013-2018թթ զարգացման ռազմավարական ծրագրին հավանություն տալու հարցը /զեկ.՝ Գ. Պետրոսյան/:
2. Ատենախոսության թեմաների հաստատում /զեկ.՝ ամբիոնի վարիչներ/:
- 3.ԳՊԿ-ի հայտարարած գիտական թեմաների մրցույթին մասնակցության երաշխավորության հարցը/զեկ՝ Խ. Գալստյան/:
4. Ընթացիկ հարցեր/ Տ. Բալայանի ներկայացրած աշխատանքի երաշխավորության հարցը/:

Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 2013-2018թթ զարգացման ռազմավարական ծրագրին:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսությունների հետևյալ թեմաները.

ա/ ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հայցորդ Աշխեն Բեգլարյան - «Քաղաքացիական հասարակությունը ՀՀ ազգային անվտանգության ապահովման համատեքստում», ԻԳ.00.01-«Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Ալեքսանյան,

բ/ ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հայցորդ Հայկ Մարգարյան- «Հայոց պետականության վերականգնման հարցը ուշ միջնադարի հայ քաղաքական մտքի ներկայացուցիչների հայեցակարգերում», ԻԳ.00.01-«Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար՝ փ.գ.դ. Հ. Մանուչարյան,

գ/ Արցախի պետական համալսարանի ասպիրանտ Անուշ Պետրոսյան - «Էթնոքաղաքական կոնֆլիկտների փոխակերպումները աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում», ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար՝ փ.գ.դ. Ա. Մանասյան

դ/ Հայ-ռուսական /Մլավոնական/ համալսարանի հայցորդ Նաիրա Հարությունյան - «Պաշտամենտարիզմը ՀՀ հասարակական քաղաքական կյանքի վերափոխման համատեքստում», ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար՝ փ.գ.դ. Պ. Ավետիսյան /Հայ-ռուսական /Մլավոնական/ համալսարանի հայցորդ Անժելա Խաչատրյան - «Հայ-թուրքական արձանագրությունների հիմնախնդրի շուրջն ընթացող քաղաքական և հանրային բանավեճի վերլուծությունը», ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և

գործընթացներ» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար՝ ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյան,

զ/ Հայ-ռուսական /Մլավոնական/ համալսարանի հայցորդ Աստղիկ Խաչատրյան - «Պետական քաղաքականությունն ու գաղափարախոսությունը ադրբեջանցիների նույնականացման գործընթացում», ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար՝ ք.գ.դ. Ա. Ենգոյան:

է/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հեռակա ասպիրանտ Անահիտ Օհանյան - «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեությունը Անդրկովկասում 1918-1920թթ.» ԻԳ.00.04-«Միջազգային հարաբերություններ» մասնագիտացմամբ: Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր Գեղամ Պետրոսյան:

3. ԳՊԿ-ի հայտարարած մրցույթին մասնակցության համար երաշխավորել հետևյալ գիտական թեմաները՝

ա/ «ՀՀ հարաբերությունները Հունաստանի հետ 1918-1920թթ.» գիտական թեման /ղեկավար Է. Զոհրաբյան/,

բ/ «Հայ-քրդական հարաբերությունները և Իրաքյան Քուրդիստանի գործոնը տարածաշրջանային անվտանգության համակարգում» գիտական թեման /ղեկավար Վ. Պետրոսյան/

գ/ «Հայոց ազգային գաղափարախոսության ծագումն ու զարգացումը» գիտական թեման /ղեկավար Հ. Մանուչարյան/,

դ/ «Քաղաքական երկխոսության հիմնախնդիրը Հայաստանում» գիտական թեման /ղեկավար Խ. Գալստյան/,

ե/ «Սոցիալական ցանցերի դերը ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում» գիտական թեման /ղեկավար Ա. Ալեքսանյան/:

4. Ընդունել Է. Զոհրաբյանի ներկայացրած «ՀՀ ադրբեջանաբնակ ապստամբ շրջանների հնազանդեցումը 1919-1920թթ.» գիտական թեմայի հաշվետվությունը:

5. Տիգրան Բալայանի «Լեռնային Ղարաբաղի խնդիրը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ.» մենագրությունը երաշխավորել հրատարակության:

**Խորհրդի նախագահ, պրոֆեսոր
Խորհրդի քարտուղար, դոցենտ**

**Գ. Պետրոսյան
Խ. Գալստյան**